

Չեխիայի ազգային գրադարանի վերականգնման բաժնի աշխատակցուհի Զուգանա Միլներովայի սեմինարը Ազգային գրադարանում

Գրքերի մշակում, վերականգնում եւ թվայնացում...Չեխիայի ազգային գրադարանի վերականգնման բաժնի աշխատակցուհի Զուգանա Միլներովան փորձի փոխանակման ծրագրով ներկայացավ Հայաստանի ազգային գրադարանում: Ձեկույցին զուգահեռ նա տեսաշարով ներկայացրեց գրքի խնամքի ու վերականգնման եղանակներն ու մոտեցումը, որ կիրառվում է իրենց երկրում, պատմեց տեխնոլոգիական նորամուծությունների մասին:

«Գրքերի վերականգնման համար օգտագործվող նյութերը, որ տեսա Ազգային գրադարանում, գրեթե նույնն են, ինչ Չեխիայում: Մոտեցումն է տարբեր, ավելի զարգացած տեխնոլոգիաներ են օգտագործվում, սակայն պետք է ընդգծեմ, որ այն ռեսուրսով ինչ դուք ունեք, բավականին լավ գործ է արվում», - նշեց Միլներովան՝ կարեւորելով փորձի փոխանակման ծրագրերն ու հույս հայտնելով, որ նման ձեռնարկի հանդիպումները հաճախ կլինեն:

Հայաստանի ազգային գրադարանի տարբեր բաժինների աշխատակիցներից բացի, փորձի փոխանակման ծրագրին մասնակցում էին նաեւ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի վերականգնման բաժնի աշխատակիցները: Ձեկույցմանը հետեւեց մասնագիտական քննարկում:

Հայաստանի ազգային գրադարանի Տպագիր արտադրանքի վերականգնման բաժինը «գրքերի շտապօգնությունն» է համարվում:

Այստեղ զբաղվում են տպագիր արտադրանքի խնամքի, պահպանման, վերականգնման



խնդիրներով: Բաժինը հսկողություն է իրականացնում գրապահոցում պահպանվող ֆոնդերի նկատմամբ, հայտնաբերում է «հիվանդ» տպագիր միավորներ և զբաղվում դրանց բուժմամբ և ախտահանմամբ: Առանձնակի մոտեցում է ցուցաբերում հնատիպ գրականության վերականգնմանը՝ հազվագյուտ գրքեր, թերթեր, հին քարտեզներ, արժեքավոր լուսանկարներ, հմայիլներ և այլն: Տարվա ընթացքում վերականգնվում է շուրջ 100 հնատիպ գիրք: